Ռուբինեանց անկումից յետոյ էլ, մասնաւորապէս ԺԶ. դարից սկսած մինչեւ ԺԸ. դարի կէսերը, մինչեւ Կարապետ Գ. Ողնեցի կաթողիկոսը (1726–1730), մեր կաթողիկոսներից ոմանք — Ստեփաննոս Սալմաստեցի, Միքայէլ Սեբաստացի, Մելքիսէթ, Փիլիպոս Աղբակեցի, Նահապետ Ուռհայեցի եւն. — որոնել են Արեւմուտքի, գլխաւորապէս Հռոմի բարեկամութիւնը: Նպատակը եղել է նորից քաղաքական — բայց ոչ զուտ կրօնական — հայ ժողովրդի ազատագրութիւնը օտար լծից: Այո՛, նրանք դիմումներ են արել, նամակներ են գրել, պատգամաւորներ են ուղարկել, անգամ անձամբ Արեւմուտք են անցել, պատրաստակամութիւն յայտնելով նոյնիսկ որոշ զիջումներ անել Հռոմին կրօնական խնդիրներում, բայց միայն եւ միայն քաղաքական նպատակների համար — հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը փրկելու եւ Հայաստանի անկախութիւնը վերականգնելու համար:

Դժբախտաբար, արդիւնքը եղել է միշտ զերօ, որովհետեւ նախ՝ կաթոլիկ Եւրոպան էլ շատ լաւ հասկանում էր հայերի իսկական միտքը. երկրորդ՝ մասնաւորապէս Հռոմը ինքն էլ այնպիսի վիճակի մէջ էր գտնւում — մանաւանդ ԺԶ. դարից սկսած — որ հազիւ էր իր գլուխը պաշտպանում բարենորոգչութեան (ռէֆորմացիա) հարուածներից. ո՞ւր մնաց, ուրեմն, որ մտածէր Արեւելքի խորքերում տառապող ինչ որ մի բուռ քրիստոնեայ հայերի ազատութեան մասին:

Կաթոլիկ քարոզիչների բացասական դերը մեր պատմութեան մէջ ներկայացնելով հանդերձ՝ չմոռանանք նաեւ ընդգծել, որ այդ ամէնի փոխարէն նրանք մէկ բարիք էլ բերին հայ ժողովրդին: Այդ այն է, որ նրանք շարունակ հրահրում եւ վառ էին պահում մեր մէջ Հայաստանի անկախութեան գաղափարը: Նպատակ ունենալով հայոց եկեղեցին ենթարկել Հռոմի իշխանութեան, նրանք այն միտքն էին տարածում, որ Պապը կ՚ազատագրի հայերին, եթէ նրանք՝ հայերը հռոմէադաւան դառնան:

Այդ միտքը եռանդով տարածում էին բոլոր քարոզիչները, մասնաւորապէս եզուիտները, որոնք ֆրանսական պետութեան գործակալներն էին Արեւելքում եւ ծանօթ էին Լուդովիկոս 14–րդի քաղաքական ծրագրին — Թուրքիայի նուաճումը եւ Արեւելքի ամբողջ քրիստոնէութեան ազատագրումը: Առ այդ Հայաստանում գործող ֆրանսացի հոգեւորականներից մէկը գրում էր, թէ ազատուելու տենչանքը շատ մեծ է հայ ժողովրդի մէջ, որը խորապէս հաւատում է Ներսէս Մեծի գուշակութեանը, այն է՝ որ ինքը քրիստոնեայ Արեւմուտքի օգնութեամբ պիտի ազատագրուի մահմեդական լծից1):

Որ իսկապէս կաթոլիկ միսիոնարները, մասնաւորաբար եզուիտները, Հայաստանի անկախութեան գաղափարի հրահրողներն էին հանդիսանում մեզանում — դրա համար բաւական ցուցմունքներ կան մեր քաղաքական շարժման պատմութեան մէջ: Յատկապէս Եւրոպային դիմելու եւ Արեւմտեան պետութիւնների, գլխաւորապէս Հռոմի միջոցով ազատութիւն ձեռք բերելու միտքը — նորից ամենամեծ մասով պատկանում է նոյն քարոզիչներին, առաւելապէս եզուիտներին: Դրա մի պերճախօս ապացոյցն է Օրբի մէկ ցուցմունքը, 29 յուլիսի 1701 թ. ռուսաց արքունիքում, որից մենք տեղեկանում ենք, որ նրա երկու գլխաւոր աշակիցներն էին Հայաստանի ազատագրութեան գործում երկու եզուիտ քարոզիչներ, եւրոպական երկու արքունիքներում,— Պատէր Վուլֆը՝ գերմանական կայսրի մօտ եւ Պատէր Պօտիէն՝ Պֆալցի իշխանի մօտ (Եղեան, Պետրոս Մեծի Յարաբ. եր. 19, փաստաթուղթ 44, եր. 92):

Ահաւասիկ ընդհանուր գծերով այն պայմանները, որոնց մէջ գտնւում էր հայ ժողովուրդը Յակոբ կաթողիկոս Ջուղայեցու օրով, նրանից առաջ եւ նրանից յետոյ, մի քանի դար շարունակ:

Բնական է ուրեմն, որ նման պայմաններում Հայաստանի անկախութեան գաղափարը ծնունդ առնէր նոր թափով եւ դառնար նպատակակէտ եթէ ոչ բովանդակ հայ ժողովրդի, բայց գէթ նրա ղեկավարող տարրերի համար — որովհետեւ այդ գաղափարի իրականացումով միայն հնարաւոր էր ազատուել եղած դըժոխային կացութիւնից:

1) Լէօ, «Հայոց հարցի վաւերագրերը», եր. 6: